

Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ի Ս Ա Բ Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ՅԵՂԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ի Պ Ր Ո Ս Ի Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ա Յ

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԱԶԳԱՏՈՂՄԻՆ

(Քաղաքի Դիտման էն վեճեճհոց)

(Տե՛ս Հա՛տ. ԼԹ, Պր. Գ. էջ 231, Հա՛տ. Խ. Պր. Ա. էջ 26):

238

1397. ԺԱՆՈՒՍ ԼՈՒՍԻՆԵԱՆ, թա-
գաւոր կիպրոսի, երուսաղեմի և Հա-
յաստանի, անդրանիկ օրդի Յակովբայ
Ա և Էդոյիգի 'ի Պրունավիբէ, նախ քան
'ի գահ ամբառնայն իշխան Անտիո-
քայ տիտղոսը կրեց: Նրան 'ի ձենովա
1374ին միջոցները, (վասն զի յաթոռն
եղած ժամանակ 2/4 տարուան կար) իւր
հօրը գերութեան ատեն, որ էր իբրև
պատանգ 1374ի պատերազմին: Ժա-
նուս անունը ստացաւ 'ի յիշատակ իր
ժննդեան տեղւոյն: Մեռաւ 1432ին յու-
նիս 27, հազիւ 58ամեայ, ինչպէս կը
տեսնուի իր շիրմին արձանադրութե-
նէն: — Հօրը կենդանութեան ժամա-
նակէն ապարդիւն դաշնախօսութիւնք
եղած էին իւր ամուսնութեան համար
ընդ Մարեմու 'ի Նավարրայ, դուստր
կարողոսի Զարի:

Առաջին կիւն, նախ քան զ1401, Էլո-
սիդ կամ Լուիդ ժանուս թագաւորին այս
առաջին կիւնը՝ զոր չեն յիշեր ոչ հին և ոչ
ժամանակակից պատմագիրք, երեք նշա-

նաւոր յիշատակարանաց մէջ կը տեսնուի.
ա. 1401ի վենետկոյ յիշատակագրի մը
մէջ, յորում կ'ըսուի թէ կիպրոսի թագու-
հին քոյր է դքսուհւոյն Միլանու. կոյն-
ցեալոյ քստնիկ Միլանու, որ սիրէ գրոյր
իւմ գտիկիւն քազուհի. բ. 1404ի մայիս
1 Նէապոլոսոյ յիշատակարանի մը մէջ,
յորում թագուհին յանուանէ այսպէս
կը յիշուի. « տեաքցն ժաւի և Էդոյի-
գայ, կիպրոսի և Հայաստանի քա-
զաշորի և քազուհւոյ. և գ. 1406 օ-
գոստոս 24ին վենետկոյ ժերակուտին
վճուոյ մը մէջ, այն գումարի պարտուց
համար՝ զոր կիպրոսի թագաւորն և թա-
գուհին պարտէին վենետիկեաց: կը
տեսնուի որ ժանուս թագաւորն այս ա-
ռաջին ամուսնութենէն զաւակ չէ ունե-
ցած, և չի գիտցուիր այս Էդոյիգ առաջին
թագուհւոյն վախճանած ժամանակը.
յայտ է որ այս Էդոյիգ անկարելի է
նոյն համարել իւր թագուհի մօր Պրունու
վիբքի Էդոյիգի հետ:

Երկրորդ կիւն. 1409ին օգոստոս 2,

ժանուս'ի ձեռն գործակալի 'ի դղեկին Մըլէօն, կ'առնու 'ի կնուկիւն զՇարլոզ Պուրպոնեան, դուստր Յովհաննու Բ Պուրպոնե—վանտովի, կոմս Լա Մարշի, որ այն տտենէն սկսաւ կրել թագուհի կիպրոսի տիտղոսը: Շարլոզ թագուհին կիպրոս երթալու համար, վենետիկ քնաց նաւ մտնելու: Յամին 1411 յունիս 6 և յուլիս 14, ծերակոյտը զանազան որոշուութիւններ ըրեր էր զիշխանուհին իւր վիճակաց մէջ ընդունելու կերպին համար, և երկու ցականաւ սահմաններ էր զթագուհին իւր անձինքներով կիպրոս տանելու: — Սակայն անհասկանալի է ինչ որ Սանուտոյ կ'ըսէ 1415 փետրուար 17ին թագուհւոյն հասնելուն համար 'ի վենետիկ. զոր իզպէլ կը կոչէ: Բոլոր այն մասը վրիպակ է: — Շարլոզ Պուրպոնեան պէտքէ որ վենետիկ նաւ մտած ըլլայ 1411ին յուլիսի վերջեր: Օգոստոսի սկիզբները ցամաք ելաւ 'ի կերինէս: Ամուսնութիւնը կատարուեցաւ Նիկոսիոյ Ս. Սոփիա եկեղեցւոյն մէջ 1411ին օգոստոս 25: Մեռաւ 'ի կիպրոս 1422ին յունուար 14. Ժամանակագիրներէն ոմանք յունուար 15ին կ'ըսեն:

Որդիք, 1. Յովհաննէս Բ, որ իրեն յաջորդեց, ծնեալ յամին 1414:

2. Յակոբ, որ դեռահասակ վախճանեցաւ, ունենալով ինչպէս կ'երևայ կիպրոսի սենեպալ պատուանունը:

3. 4. Երկուորեակք, 1418էն վերջը ծնեալք, և վախճանեալք 'ի խանձարուրս:

5. Մարիամ, խօսեցեալ Փիլիպպոսի Պուրպոնեան, որ էր տէր Պոթէօյի, անդրանիկ որդի կարպոտի Ա զքսին Պուրպոնեան: Մարիամ վախճանեցաւ յառաջ քան զհարսանիս:

6. Աննա, որ եղաւ զքսուհի Սավոյայ: Ոչվիէ տը Լա Մարշ զինքը Յովհաննէս կ'անուանէ, և բազմաթիւ պատմագիրք՝ Այնէս, յորոց ոմանք զինքը նոյն էր համարին իւր Ազնէս հօրաքեռ հետ, որ յիրաւի եկաւ 'ի Սավոյայ և հօն մեռաւ 1459ին:

Աննա ծնեալ էր 1415ին սեպտեմբ

բեր 24 ըստ Մագերայի և ըստ Ամատիի 1418ին սեպտեմբեր 24:

Յամին 1431 օգոստոս 9 նշանուեցաւ ընդ էմէի Սավոյայ, որ էր անդրանիկ որդի Ամէսէոսի Ը զքսին Սավոյայ: Էմէ մեռնելով, ամուսնութեան դաշնախօսութիւնը նորէն սկսան 1432ին յունուար 14, անոր Լուդովիկոս եղբոր հետ, որ էր կոմս ճիկնէտայի և 1451ին դուքս Սալոնայ եղաւ ժանուս թագաւորին մահը աւուսնութիւնը ուշացուց: Վերջապէս նախ գործակատարաց ձեռքը հուշակուեցաւ 'ի Նիկոսիա 1433ին հոկտեմբեր 4. Դուրինի եպիսկոպոսը եկեղեցական հանդէսը կը կատարէր և Լուդովիկոս Սավոյայուցն կողմանէ նուիրակէ էին տէրն Ռագոնիսի և Լուդովիկոս Անհարազատն աքայցելի: Աննա քիչ վերջը բազմաթիւ տապաւններով և տիկնամբ մեկնեցաւ 'ի Սավոյայ, ուր վաւերական և հանդիսաւոր ամուսնութիւնը կատարուեցաւ 'ի Շամպայէի 1434ին փետրուարի, 'ի ներկայ յուլիեան ծիրանաւորին Հիւկոսի Լուսինեան, որ էր հօրեղբայր իշխանուհւոյն:

Յամին 1436 վենետիկ հասարակապետութիւնն, ուզելով հաճոյական բան մ'ընել Սավոյայ զքսին, կ'ըսէ Սանուտոյ, տուաւ վենետիկեան ազնուականութիւն առ շքեղապիստ տիկինն Ազնէս, քոյր քաղաւորին կիպրոսի: Ոսկեղէն մատենին վրայ այս արձանագրութիւնը ես աւելի Աննա իշխանուհւոյն համար կը համարիմ, քան իւր Ազնէս հօրաքեռ համար, որ չէր միանգամայն քոյր թագաւորին կիպրոսի:

Յամին 1450 օգոստոս 14, Աննա, որ յայտմ հետէ կը կոչուի զքսուհի Սավոյայ, Աննա կիպրոսցի, դքսուհի Սապաւալայ, տիկին Պուրկիդի և Վիլյաֆրանքայ, Շամպայի մօտ Գանեէն կամերլին քով կը հիմնէ Տրոմաօր մատուռ և կը հաստատէ միանգամայն շատ մը Հանգստեան պաշտօններ իւր հօրը հօգոյն: Ժանուս թագաւորին, իւր մօրը Սալլոզի Պուրպոնեան և իւր ծիրանաւոր հօրեղբոր համար:

Դքսուհին Աննա վախճանեցաւ 1462ի

նոյնմբեր 11 և թաղուեցաւ 'ի ճինևուա իւր հիմնած Գորտէլիէ տը Ռիվ վանքին մէջ, Լուգովիկոս դըսէն 15 որդի ունեցեր էր, ութ ուստր և 7 զուստր: Ուստերաց անդրանիկն էր Ամէտէոս թ, որ յաջորդեց իւր հօրը յամին 1465:

Որդիք. (յետոյ պիտի տեսնենք): Արքայն ժանուս ունեցաւ նաև երեք անհարազատ որդիք:

1. Փերոս Լուսինեան, որուն սերունդքը կը դնենք 'ի ժանօթութեան *:

2. Լուգովիկոս Լուսինեան, ասպետ չըւողորմի, հրամանատար Լա Ֆենիքայի և Լա Նուայէրի, որոնք այսօր կը կոչուին Ֆենիքա և Մնոկիտա Պափոս նահանգին մէջ, կոպըլէն բերսոնա՝ ժամանակակից հեղինակը՝ կը մեղադրէ գծովհաննէս իր քահանայապետը որ 'ի ձեռն մեծադանձ դրամոց, հաւաներ էր չնորհել ժանուս թագաւորին շատ մը իրաւունքներ, ընդդէմ կարգաց և իրաւանց Հռոյտի ասպետութեան, որոց մէջ կար և այն որ տակաւին հնգամեայ անհարազատ մանկան տուեր էր կիպրոսի

* Մերունքը Փերոսի Լուսինեան, անհարազատ որդւոյ ժանուս քաղաւորին, տէր Սիդոնի և մարաշախ Հայաստանի:

Իրենն է, կարծեմ, 1432-1433 ցեղաբանական ժանօթութենէն, ընծայեալք երբեմն Հիւկոսի Լուսինեանի 'ի 1447 Փերոս նորիակ զրկուեր էր յերոպա Յովհաննէս թագաւորէն: 'ի 1459 յեշտակարան մը զինքը մարաշախ Հայաստանի կ'անուանէ և կը յիշէ իւր զուստր Էլէոնուրա: Փերոս հաւատարիմ մնաց Շայլոզ թագուհւոյն և ընդդիմացաւ Յակոբ Անհարազատի անհաջից: 'ի 1462 Փերոս, տէր Մեղոնի, Շարլոզ թագուհւոյն ընկերեց 'ի Սալոյա: 'ի 1463 և 1464ին միտա թագուհւոյն և Լուգովիկոս թագաւորին զովիք գտնենք զինքը մերթ 'ի կիպրոս մերթ 'ի Շառտու, և երբեմն իւր Հիւկոս որդւոյն հետ միաբան:

Կին, իրապէջ Պապէն, ուսկից որդի ունեցաւ Հիւկոս, որ երկու կին ունեցաւ: 'ի 1432-1433 ցեղաբանութեան մէջ յորում կը յիշուին իւր երկու զուստրքը Կագա և Էլէոնորա, Փերոս իւր կինը կ'անուանէ Ուզապիա Պապիանա:

Որդիք, 1. Հիւկոս, զոր պիտի տեսնենք: 2. Կագա կամ Ժաքքէզ, ըստ ցեղաբանութեան ծնեալ 1433ի յուլիս 3, հինգշաբթի օրը: 3. Էլէոնորա, ծնեալ 1433 սեպտեմբեր 28 երկուշաբթի օր: 'ի 1439 յիշատակարան մը կ'ըսէ, որ այս տարւոյս այրի էր նա Սոփրէտ Գրիւ

հատոյթ մը, և առանձնաշնորհութիւններ իր ուխտերը կատարելու:

3. Դուստր մի, տուեալ յամուսնութիւն քաջին Գարչերամ Սուարէսի, ասպետ զասդիլիացի, որ մի և նոյն ժամանակ ժանուս թագաւորէն կիպրոսի ծովակալ անուանուեցաւ, որուն գերութեան մասնակից եղեր էր յեղիպոտոս, յետ անոր կեանքը ազատելու Քիէրոքիդիայի պատերազմին մէջ:

1432. ՅԱՎՀԱՆՆԷՍ Բ Ա Ռ Ո Ւ Ս Ի Ն Ե Ւ Ն, թագաւոր կիպրոսի, Երուսաղեմի և Հայաստանի, անդրանիկ որդի ժանուսի և Շարլոզայի Պուրպոնեան, ծնեալ 'ի 16 մայիսի կամ 'ի 14 յամին 1414: Իւր ծննդեան միջոց իշխան Անտիոքայ կոչուեցաւ, որովհետև Դրիբուլի կոմսը տակաւին կ'ապրէր, և նոյն տիտղոսը կրեց մինչև 'ի գահ բարձրանալը: Յովհաննէս Բ վախճանեցաւ 1458ի յուլիս 26, երկուշաբթի օր, 44 տարուան, և թաղուեցաւ Ս. Դովինիկոս եկեղեցւոյն մէջ:

Եւ վերտին ամուսնացաւ 'ի կիպրոս ընդ որդուգայցի աշնուական ասպետի, Վելաքեզ Ժիւ Մոնի:

Հինոս ԼՈՒՍԻՆԵԱՆ, որդի Փերոսի և իրապէի Պապէն: Հաւանօրէն իր գալուստն է 'ի Շառտու առ հաւատարիմ իշխանօ օրինաւոր կողման 'ի Շառտու, զոր կը յիշէ իւր մեկ թղթոյն մէջ Թագուհին Շարլոզ 1464ի սեպտեմ. 1. Հ. Լուսինեան կ'ըսէ, որ երկու կին ունեցաւ, բայց միայն երկրորդը կ'անուանէ:

Սապին կին, Ա.
Որդիք. իրապէջ Լուսինեան, կին Վերիի 'ի Չիւկոզ (կամ իւրլէն), տէր Մագրասիգի, որ է Մագրասիքա 'ի Մէտարէա:

Երկրորդ կին, Ա. 'ի Բյազոնոնէ:
Որդիք, Լուկրտիա Լուսինեան, կին Օլիվիէի տը Ճալորը, Հայր Հիւկոսի և Վայերիոսի տը Ճալորը կամ Ճալորի. (որում, կ'ըսէ Լուսինեան, իրենց ժողջէտ 1570ին տառապանքաբարտասաց անգութ ձեռքերէն): Սնուշտ ըսել կ'ուզէ որ գերի տարուեցան 'ի Տանկաց:

Հիւկոսի զստերնթէն կամ որդիքներէն մէկն, զոր չի յիշեր Հ. Լուսինեան, կ'ուզեն որ սերեալ համարուի 'ի Լուսինեանց Քիոսի, որոնց սերունդը կը բնակին այսօր 'ի Կ. Պօլիս, և կը կրեն Լուսինեան անունը:

* ՅՃԸ հրատարակեալք 'ի Constantinople Messenger, daily edition 13 նոյեմբեր 1880, էջ 5:

Գէորգ Ե՛հնկենացի Սուապիոյ ասպետ մը, 1435ին կիպրոսի արքունիքը գալով իւր ուղևորութեանց պատմութիւն մը գրած է, յորում մանրամասն գունովք նկարած է այն ամեն իշխանքը, որոց ներկայանալու պատիւ ունեցեր է: Այս պատկերները յիրաւի կը տեսնուի որ ժամանակակից կենդանի անձանց կերպարանքներն են: Արքայն Յովհաննէս Բ, որ իւր կարգին աստիճանովը պատուեց մեծազգի ճանապարհորդը, այս հետաքննական պատկերաց հաւաքման մէջ կը գտնուի: Պատկերը մեզի գաղափար կու տայ ռ.քառասնամեայ անձի մը, գէր գէմբով, բարձրահասակ և թերևս կարի լիամարմին: Գլուխը գտակ մը և միանգամայն դլխարկ մը, սև գունովք, զգեստներուն պէս: Պճղնաւոր գրատ մը հաղած է, ըստ իտալական սովորութեան ուսոց վրայ կամարած և հանգրիւնեալ: Կարճ վերարկու մը ալ կողէն անցնելով կ'ամփոփուի 'ի ձախ կողն: Երեքկարգեան ոսկի շղթայ մը կախուած է կուրծքին վրայ »:

Նախ ջանացին որ ամուսնանայ Հետ վին իշխանուհւոյն հետ, որ էր դուստր Լեհաստանի թագաւորին. և յիրաւի 1431ին առ վլատիլաւ Ենուիրակութի մը գնաց այս պատճառաւ, հարիւրասպետներէ կազմեալ, որոնց զլուխն էր Պատենի տը մարտիստ Երուսաղեմի: Առաջարկութիւնը հետևանք մը չունեցաւ, բայց յիշատակարանք նուիրակութեան ստուգութիւնը կը հաստատեն:

Առաջին կիև, Էմէ, Ամէտէա կամ Մետէա տը Մոնֆերրայ, իւրազգակիցը, դուստր Յովհաննու Յակովբայ Պալէոլոգի, մարգեզին Մոնֆերրայ: Ամուսնութիւնն, որուն միջնորդ եղեր է Հիւկոս ժիրանաւորն, հօրեղբայր թագաւորին, 'ի զլուխ հաննց Յովհաննէս թագաւորն ներկայութեամբ ժիրանաւորին՝ 'ի զղեկին Ռիփայլ 'ի Սալոյա, 1437ին զեկտեմբեր 23, (և ոչ սեպտեմբերի, ինչպէս կ'ըսեն ոմանք հետևելով Մուրադորիի):

Յամին 1439 թագուհին Էմէ տակաւ

ւին յերոպա գտնուելով, Եւղինէոս Դ իրեն շնորհեց երկու փրակիակեան կրօնաւորներ ունենալ իւր տանը մէջ, աստուածային պաշտաման կատարման և խոստովանութե համար, Ամեռեայի կիպրոսի դշտայի, և այլն: Ի 1439 հուլ. տեմբեր 9 վենետիկոյ ծերակոյտը կը հրամայէ ցուկանաւ մը հանդերձել Մոնֆերրայի մարգիզին դուստրը տանելու 'ի կիպրոս, և երկրորդ տարւոյն 1440ին մայիս 23 նոյն ժողովը կ'որոշէ թագուհւոյն մատուցանելիք ընծայքը, թէ 'ի վենետիկ հասած ժամանակ և թէ Տէրութեան կզգեացնաւահանգիստներէն անցնելու ատեն: Էմէ, 1440ին մայիս 27 կամ 28 նաւ մտնելով 'ի վենետիկ, հաւանակեալապէս հասաւ 'ի կիպրոս յունիս ամուսն: Իւր ամուսնութիւնը և թագադրութիւնը եղաւ յուլիս 3ին 'ի Սիոփիա, և մեռաւ հետևեալ սեպտեմբեր 13ին, թաղուեցաւ 'ի Ս. Դովինիկոս Շարլոզ Պուրպոնեանի գերեզմանին մէջ, որ էր մայր իւր ամուսին թագաւորին:

Երկրորդ կիև, 1442ին փետրուար 3, արքայն Յովհաննէս կին առաւ զՍիփիա Հեղինէ Պալէոլոգ, դուստր Թէոդորոսի Բ Պալէոլոգ, իշխան Մոուէայի, երկրորդ որդի Մանուէլ կայսեր: Սիփիա վախճանեցաւ 'ի կիպրոս 1458ին ապրիլ 11, իւր ամուսին թագաւորին մահուընէն երեք ամիս առաջ:

Որդիք, 1. Շարլոզ Լուսինեան, զոր պիտի տեսնենք յետոյ:

2. Կլէոպատրա, մանկահասակ վախճանեալ:

Անհարազատ որդի մը, Յակովբ Անհարազատ, Յակովբ Բ, զոր պիտի տեսնենք յետոյ:

1458. ՇԱՐԼՈՂ ԼՈՒՍԻՆԵԱՆ, թագուհի կիպրոսի, Երուսաղեմի և Հայաստանի, դուստր Յովհաննու Բ և Հեղինէի Պալէոլոգ, ծնեալ յամին 1436. որուն մկրտութեան կնքահայր եղաւ Պետրոս Լուսինեան, կոմս Տրապոլոյ, որդի Յակովբ Լուսինեանի մը, զոր պէտք չէ համարել զարքայն Յակովբ Ա, ինչպէս կ'ըսէ Գէորգ Պուստրան, այլ պէտք է որ

ըլայ Յակովբ կոմս Տրապոլայ, որդի իշխանին Անտիոքայ :

Շարլոզ՝ Թագուհի հռչակուեցաւ իւր հօրը մահուան օրը 1458ին յուլիս 26 : Ի 1460 սեպտեմբերի կորանցուց զՆիկոսիա և քաղուեցաւ 'ի զղեակն կերինէս . 1461ին Թողուց զկիպրոս : Ի 1482 այրիանալով 'ի Լուզովիկոս Թագաւորէ, հրաժարեցաւ 'ի նպաստ կարողութի Ա. զքսին Սափոյայ, որ էր եղբորորդին, յամին 1485 փետրուար 25 :

Ի 1487ի յուլիս 16 երկուշաբթի օր, մեռաւ 'ի Հոովմ իր բնակած տանը մէջ 'ի Սքոցցա Գովալլի հրապարակն, 'ի Պորկոյ : Թաղուեցաւ նոյն օրը (կ'ըսուի) 'ի ներկայութեան ծիրանաւորաց և Հոովմայ արքունեաց, Ս. Պետրոսի դամբանարանաց մէջ : Իւր գերեզմանական վիմաքարը կը գտնուի Գեանադամբանին մէջ դէմ առ դէմ Ս. Փրկիչ խորանին : Կարգացի ես իսկ այն համառօտ արձանագրութիւնը, յիշատակեալ նաև 'ի քաղաւորական տիտղոս Սափոյայ : Առաջին աւուռսին, յամին 1456¹, Յովհաննէս Գոյիմարացի, Թոռն Յովհաննու Ա թագաւորին Բորդուգալի, որ այս ամուսնութեամբ իշխան Անտիոքայ տիտղոսը ընդունեցաւ : Մեռաւ հետեւեալ տարին 'ի 1457 'ի կիպրոս, հաւանականաբար տարուցն առ ՚ի ամիսնբրուն մէջ, և Թաղուեցաւ 'ի Ս. Փրանկիսկոս :

Երկրորդ ամուսին, Լուզովիկոս Սափոյացի, կոմս ճինեալայի, որ էր իւր հօրաբեռն որդին, որդի Լուզովիկոսի զքսին Սափոյայ և Աննայի Լուսինեան, ծնեալ յամսեանն յունիսի ու 'ի 1431, (ինչպէս կ'ըսէ կիլընոն, վասն զի իրեն հօր և մօր ամուսնութիւնը եղաւ 1434ին) այլ 'ի 1436ին, որովհետև 1444ին ութամեայ էր, երբ նշանեցին զինքը Սկովտիոյ Թագաւորին դստերաց

1 Կիպրոսի Թագաւորին նուիրակը, որ զբրկուած էր այս ամուսնութիւնը դաշնախօսել և բանակարի Պորկոնյի զքսին և Բորդուգալի Թագաւորին հետ, յորոց մին հօրեղբայր և միւսն մօրեղբայր էր Յովհաննու Գոյիմարացոյ, յամին 1455 զեկտեմբեր 30, տակաւին 'ի Վենետիկ էր :

մէկուն հետ : Լուզովիկոս Սափոյացոյն ամուսնութիւնը ընդ Շարլոզի Լուսինեան, կուեցեալ իշխաննոյն Անտիոքայ, նախ և առջ կատարուեցաւ 'ի ձեռն գործակատարաց 'ի Գուրին, մինչ տակաւին կ'ապրէր արքայն Յովհաննէս Բ Լուսինեան յամին 1457 'ի 10 հոկտեմբերի :

Ամուսնութիւնը իրապէս հռչակուեցաւ յամին 1459 'ի կիւրակէի աւուր հոկտեմբեր 7, 'ի Նիկոսիա, յեկեղեցւոյ Ս. Սովիայ : Նոյն օրը Լուզովիկոս պատկուեցաւ Թագաւոր կիպրոսի, Երուսաղեմի և Հայաստանի : Թագուհւոյն Թագադրութիւնն տարի մ'առաջ եղիւր էր, Յովհաննէս Բ Թագաւորին մահուան համար 40 օր սուգ բռնելէն վերջը, կիրակի օր մը, և հաւանականաբար 1458ին սեպտեմբեր 3 կամ 10ին կիրակէն : Արքայն Լուզովիկոս Թագուհւոյն հետ քաղուեցաւ 'ի զղեակն կերինէս 'ի 1460 սեպտեմբեր ամսուն : Թողուց ապա զկերինէս և գնաց յԵրուսալ, օգնութիւն խնդրելու համար : Յամին 1460 քիչ մը ժամանակ բնակեցաւ 'ի Հոռոս, և կերինեօսի անձնատուր ըլլալէն վերջը (սեպ. հոկտ. 1463) բոլորովին քաղուեցաւ 'ի Սափոյայ : Հօն մեռաւ 1482ին ապրիլի :

Որդիք, Ա... որդի մը, որ մանկահասակ վախճանեցաւ, ինչպէս կը տեսնուի Հոռոսէն գրեալ Շարլոզ Թագուհւոյն մէկ նամակէն առ իւր ամուսինն 'ի Սափոյայ, յամին 1464 սեպտեմբեր 1 :

1460. ՅԱՎՈՈՎ ՀՈՒՍՄԵՆԱՆ, կամ Յակովբ Անուարագաուն, Թագաւոր կիպրոսի, Երուսաղեմի և Հայաստանի, անհարազատ որդի արքային Յովհաննու Բ և բաղրասացի, յոյն կնոջ մը՝ կուչեցեալ Մարիամ կամ Մարիէդ² :

Յակովբ ծնաւ յամին 1440 կամ

2 Կիպրոսի Թագուհին լմէ կամ Հեղինէ Պալէուդ, նախանձու յուզեալ բարկութեան մ'աւտեն, կորնի տուաւ այս կնոջ ոնգունը, որ անկէ ստացաւ Գովմուտիէն կամ պկլատ աւնուանակոյւմը : Յամին 1476 Թագաւորին երեք անհարազատ որդոց հետ, որոնք իր Թոռներն էին, տարուեալ 'ի Վենետիկ, յետոյ Վե-

1441, վասն զի իւր մահուան ժամա-
նակ տակաւին չէր լրացուցած 33 տա-
րին: Ի 1456 դեռ ևս 16 կամ 17 տա-
րուան, իրեն տրուեր էր Նիկոսիոյ արք-
եպիսկոպոսութիւնը. սակայն Հռով-
մայ արքունիքը երբեք չհաստատեց իր
այս անուանումը: Քիչ ժամանակ վեր-
ջը իր Շարլոզ քրոջը դէմ ապստամբե-
լով, Յակովբ թէ՛ յանդուզն և թէ՛ միան-
գամայն ճարտար, տիրեց Նիկոսիոյ. և
1460ին սեպտեմբեր ամսուն ինքզինքը
թագաւոր հռչակեց: Ի 1463 սեպտեմ-
բերի և հոկտեմբերի մէջ կերինէսի ան-
ձնատուր ըլլալով և 1464ին Ֆրանս-
կոստայի նուաճուելովը, տիրեց ամ-
բող կղզւոյն: Մեռաւ ՚ի Ֆրանկոստա,
1473ին յուլիս 6 երեքշաբաթի օր, և
թագուեցաւ ՚ի Ս. Նիկողայոս մայր-
եկեղեցւոյ, տակաւին չլրացուցած իր
33դ տարին:

Կիր. Փիլիպ Միսդահէլ, դեսպան
Կիպրոսի թագաւորի, յանուն իւր ա-
ռաւ ՚ի կնութիւն ՚ի Վենետիկ, մեծ խոր-
հրդեան դահլճին մէջ յուլիս 10 յամին
1468՝ ըստ Նաւաճիէրոյի, կամ նոյն ամ-
սուն 30ին ըստ Մալբրիէրոյի, զհատա-
րինէ Գոռնարոյ, դուստր Մարկոսի Գոռ-
նարոյ ՚ի Մեծ Որերոյն, և Փլորենտիայի
Գրիսթոյ, (դուստր Նիկողայոսի, զքսին
Արչիպեղազոսի) դուստր որդեգրեալ
վենետկեան Հասարակապետութե՛ն ծա-
նուցուած, որ այն ատեն 18ամեայ էր:
Յամին 1471 օգոստոս 17, թագաւորը
յանձնեց Յովհաննէս Բերէզ փարբի-
կիոսի, կոմս Եաֆայի, վենետիկ երթալ
իր դեսպան, և վճուապէս ստորագրել
ամուսնութեան դաշինքը: Ի 1472 մա-
յիսի, Յովհաննէս Բերէզ տակաւին ՚ի
Կիպրոս էր: Կատարինէ պէտք է որ
նաւ մտած ըլլայ ՚ի Վենետիկ 1472ին
սեպտեմբերի, վասն զի ընդհանրապէս
Արևելքի ճանապարհորդութեան հա-
մար այս ամիսը կ'ընտրուէր: Յետին
պատուէրք տուեալք առ Անդրէաս Պրա-
կատինոյ, դեսպան դքսին, և որ ընկե-
րեց իշխանուհւոյն ՚ի Կիպրոս ներկայ

նեակէն փոխադրուելով ՚ի Բատուա ՚ի 1478, այս
յետին քաղքիս մէջ մեռաւ Մարիամ բաղրասաւ

ըլլալու ամուսնութեան, գրուած են
սեպտեմբերի 19ին, Կատարինէ հասած
պէտքէ ըլլայ ՚ի կղզին յամսեանն հոկ-
տեմբերի և կամ ՚ի սկիզբն նոյեմբերի,
և իւր ցամաք ելլելէն քիչ վերջը՝ ամուս-
նութիւնն անշուշտ կատարուեցաւ: Բը-
նաւ տեղ մը չնէք դասեր արարողու-
թեան օրը: Կատարուեցաւ, կ'ըսէ Գէորգ
Պուսդրոն, ՚ի քաղաքն Ֆրանկոստա, և
այն պատճառաւ հասարակաց մեծ առ-
նախմբութիւններ եղան:

Կատարինէ Գոռնարոյ այրիանալով,
վարեց զթագաւորական իշխանութիւնը
յանուն իւր որդւոյն, զոր իւր ամուսնոյն
մահուընէն երկու ամիս վերջը ծնաւ:
Հրաժարեցաւ անկէ 1489ին փետրուար
26 հինգշաբթի օր: Նաւ մտաւ ՚ի Ֆր-
անկոստա իւրեղբորը Գէորգայ հետմար-
տի 1ին կամ 14ին և հասնելով ՚ի Լիտոյ
կղզի՝ յունիսի 15ին, փառաւորապէս
մտաւ ՚ի վենետիկ՝ երկրորդ օրը Պուչին
զորոյ նաւով, միաբան ընդ դքսին: Յե-
տոյ քաջուեցաւ Գրէվիզի մօտ ՚ի դղեա-
կըն Սղոյոյ, որուն տիրութիւնն ՚ի 1489
յունիս 29 Հասարակապետութիւնը ի-
րեն տուաւ: Մեռաւ ՚ի վենետիկ յամին
1510 յուլիս 10, 56ամեայ, ՚ի պալատն
Գոռնարոյ Մեծ Որերոյ, ՚ի Ս. Գասսիա-
նոյ, և թաղուեցաւ Ս. Առաքելոց եկեղե-
ցւոյն մէջ, որուն ժողովրդապետութե-
նէն էր: Մարմինն յետոյ փոխադրուեցաւ
յեկեղեցի Ս. Փրիչին, ուր կը հանդի-
այսօր ՚ի չիրմին՝ զոր շինեց Բեռնար-
դոս Գոնդիլինոյ:

Որդիք, Յակոր Գ, զոր պիտի տես-
նենք:

Աննարագառ որդիք արքային
Յակովբայ Բ.

1. Թագաւորը նախ անհարազատ
դուստր մի ունեցեր էր Շարլոզ կամ
Մարյուս անուամբ: Իւր հայրը զանիկայ
հարսնութեան խոստացեր էր, Կիպրո-
սի դուռնդատապլութեան հետ, սիկի-
լիացի ասպետի մը՝ Սոր տէ Նավէս, որ
ցին յամին 1503 ապրիլ 12:

Շարորդ թագուհւոյն ծառայութեան մէջ ըլլալով, 1463ին իրեն յանձներ էր զԿերինէս զղեակը: Այս անհարազատ դուստրը վախճանեցաւ 1469ին մայիս ամսէն առաջ:

Յակոբ Բ մեռած ժամանակ, երեք ողջ անհարազատ որդիք կը թողուր, Շարլոյ (երկրորդ այս անուամբ), Եւգինէոս և Յովհաննէս: Տասնից խորհրդեան հրամանաւ, այս երեք տղաքը 1476ին վերջերը վենետիկ փոխադրուեցան ընդ Մարիէի դադարասացուց, որ էր մայր իրենց հօրը: Ի 1478 Բատուայի գղեակը փակուեցան: Յետոյ կրկին բերուելով ՚ի վենետիկ, 1513ին հօնկէ փախան: Իրենց աղախնալքն, զորս արգելանաց միջոց ՚ի Բատուա իրենց օրինաւոր ամուսին առեր էին, Տասնից խորհրդով բանտուեցան: Չի գիտցուիր ինչ վերջ ունեցան ասոնք: Իսկ իշխանքն, վերջապէս նորէն դարձան վենետիկոյ վիճակաց մէջ, ուր պետութիւնը իրենց պատուաւոր թոշակ մը կապեց:

2. Շարորդ (երկրորդ այս անուամբ), ծնած էր 1468ին ապրիլ ամսուն: Վախճանեցաւ Բատուայի գղեկին մէջ 1480ին յուլիս 24, 12 տարուան և երբք ամուսն, ինչպէս կը տեսնուի իր դամբանին արձանագրութիւնէն յեկեղեցւոյ Ս. Օզոտոսինոսի դոմինիկեանց, ուր իր մարմինը թաղուեցաւ, և ոչ յամին 1492, ինչպէս կ'ըսէ Լուսինեան: Վենետիկոյ թշնամիք կը խորհէին 1473էն ՚ի վեր, մինչ վեցամիսյ էր նա, ամուսնացընել Ալոնզոյի հետ, որ էր անհարազատ որդի Նաբոլիի թագաւորին:

3. Եւգինէոս, անդրանիկը, 1473ին իւր հօրը մեռած ժամանակ 5 տարուան էր, որով և անշուշտ ծնած էր 1469ին ժամանակները: Հաւանականաբար սա է յիշեալն ՚ի Լուսինեանէ Գալղիոյ ցեղաբանութեանց մատենիկն մէջ, Յովհաննէս և երբեմն Ժէն կամ Զէն ա. նուամբ, և որուն համար, կ'ըսէ, թէ էր

Չարդրի տանէն տիկնոջ մը որդի: Առաւ ՚ի կնութիւն 1509էն վերջը ՚ի Բատուա իրեն մէկ աղախինը: Վենետիկոյ Նաւարանն փոխադրուելով, իւր եղբորը հետ կրցաւ փախչիլ անտի 1513ին մարտ 31ին գիշերը: Յետոյ թափառեցաւ ՚ի Գերմանիա և յիտալիա, ըսպասելով իւր բաղդին դառնալուն, որ երբք չեղաւ: Յամին 1523 ՚ի վենետիկ էր 55 տարուան: Այս ատենս էր որ եղեռնագործ մը առաջարկեց վենետիկոյ դեսպանին ՚ի Հռովմ, թունարելոյ զիշխանը: Հաւանականաբար վերջապէս Եւգինէոս յանձն առաւ զայլ բնակել ՚ի վենետիկ, երբ ծերակոյտը խոստացաւ իրեն թոշակ մը վճարելու: Պէտք է ընդունինք որ յանկարծադէպ մահ մ'ունեցաւ այս քաղցրիս մէջ, վասն զի Հ. Լուսինեանի այս խօսքերը, որ « Յովհաննէս ինկաւ ջրանցքի մը մէջ և խեղդուեցաւ », յայտնապէս Եւգինէոսի համար են:

Կրտսերն Մամուտոյ, որ տեսեր էր զիշխանս ՚ի վենետիկ իւր Յովհաննէս եղբոր հետ 1513ին ատենները, կ'ըսէ, որ երկուքն ալ գեղեցիկ և կտրիճ անձինք էին: Արդէն 1476ին, մինչ Եւգինէոս հազիւ 7 կամ 8 տարուան էր, Լորէտանոյ խնամակալն առ ծերակոյտն գրած պատճէնի մը մէջ կը յիշէ տղուն հանճարը և վեհանձն կերպը, որուն պատճառաւ կիպրացիք զինքը կը սիրէին:

4. Յովհաննէս, կոչուած նաև Ժուլուս, որ իր Եւգինէոս եղբոր հետ փակուելով ՚ի Բատուա, միշտ անոր բաղդին կցարդ եղաւ: Անոր նման մտաւ վենետիկեան վիճակաց մէջ և մեռաւ ծերացեալ ՚ի Բատուա յամին 1553, վայելելով միշտ այն պատուաւոր թոշակը զոր իրեն կապեր էր ծերակոյտը: Ի 1504, իւր եղբորը պէս, ծածուկ ամուսնացեր էր ՚ի Բատուա բանտարգելութեան միջոց: Չի գիտցուիր թէ ինչ եղան այս ցածագգի և օրինաւոր ամուսնութիւնս.

attitudine ». Անոպ պատճէնէ մը գրեալ 1476 դեկտեմբեր 3ին ՚ի Բարոսէ, յետ մեկնելոյ իշխանաց ՚ի վենետիկ:

* «Maxime el mazor, ornato di tal gratia ed indole che non da li huomini ma fino da le piere in ditta isola e codammodo adorato . . . Il dito figliuolo mazore de grande maniera et

բէն ծննալ մէկ քանի զաւակներն :

1473. ՅԱԿՈՎԲ Գ, որդի Յակոբու Ան-
հարազատի և կատարինէի Գոռնարոյ ,

ծնեալ յետ մահու հօրն յամին 1473 'ի
27 օգոստոս, տարի մը միայն ապրեցաւ
և մեռաւ 1474ին օգոստոսի 26 :

Վ Ե Ր Զ

ՆՈՐԱԳԻՒՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒԻԲԻՆ ԵԱՆՑՑ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ազգային օրագրաց ոմանք արդէն ծանուցին բանիրուն գրչով մի՛ Գաղղիոյ մէջ հաստատուած
լատին լրեւելից կոչուած ընկերութիւնը, (Société de l' Orient Latin). որոյ զլիսաւոր նպատակն
է Խաչակրաց ժամանակի տեղեաց և զործոց կիրայօք՝ որ և է տեղեկութիւն գտնել և հրատարա-
կել. որոյ մաս մ'ալ ընծայած է մեր ազգային մատենագրութիւնն՝ մեծ հաստրով մի, Թարգմա-
նութեամբ և ծանօթութեամբ Տիւրքիէ հայագիտի: Այս տարի ի ստացուած և Թերևս սկսած
ալ է տպագրութիւն այս գործոյս Բ հատորին, որոյ գլուխը պիտի բռնէ նորագիւտ Պատմութիւն
կամ Ժամանակագրութիւն մի Ռուբինեան վերջին թագաւորաց, և մասաւանդ բուն վերջին թա-
գաւորին Զ Լեւոնի: Այս գործոյս երբ գրուած ըլլալն և ուր գտուին կը ծանուցանէ գտողն Ռոյն-
սեւս Ռոպլեր, զորոյ հրատարակած տեղեկութիւնը կը թարգմանենմը, հանդերձ զլիսակարգու-
թեամբ հին հեղինակին, յորմէ կ'իմացուի պատմութեան բովանդակութիւնը. որ շատ նոր և
ցարդ անծանօթ դիպուածներ պիտի յայտնէ մեզի, թէ և անհաճոյ և եպերելի գործեր ալ ազ-
գայնոց ոմանց. սրբ արդ անլուելի ըլլալով պէտք է մնան 'ի յանդիմանութիւն նոցա և նմանեաց,
և 'ի խրատ ամենեցուն:

Պատմչին զլիսաւոր նպատակն է նախ'իր ժամանակակից և գրեթէ իր տիրոջ՝ վերջին Լեւոնի
վարքը պատմել մանրամասնաբար. երկրորդաբար՝ անոր նախորդ Լուսինեան թագաւորաց Շտպոց-
քիչ մ'ալ անկէ յառաջ՝ Ռուբինեանց սկզբան վրայօք ճամառուտ կ'անցնի Պատմչին, և այն անփու-
թութեամբ մեծապէս կը սխալի Լեւոն Գը անորդի և անժառանգ ըսելով. մինչդեռ մեր պատմու-
թեան մէջ ճանչցուած է ամենէն բազմորդի թագաւոր, և իր զուգակից թագուհին Ալիս-Աննա
երեք անգամ խեղճի այսինքն ջուրտակ զաւակներ բերած է, որոց հինգն ալ քիչ կամ շատ թա-
գաւորած են. բայց հեղինակն (Տարտել) կը չիօթէ անոր որդիքն և դստերքը ընդ զաւակաց հօր
նորա Հեթմոյ. նոյնպէս կը չիօթէ Դ և Ե Լեւոններն ալ: Լեւոնի Ե գերեկից Սոհեր անուամբ մէկն
ալ արդէն ծանօթ էր և կ'ոմս կ'ոտկիտի կարծուէր Շահան անուամբ. սա նոյնպէս Սոհէր կ'անուա-
նէ, բայց զմակնունն Douleort, որ ստուգելի է:

Որքան ինչդալի է մեզ այս նոր գիւտս յօտար և յանակնկալ գրչէ և տեղւոյ, այնքան տրտմալի
և ամաչելի է՝ 'ի մերազգեաց մանրամասն գրուած մը շունենալ՝ մեր ամենէն մօտ հարատութեան,
բաց 'ի Սմբատ Գոռնդատապի անուամբ հրատարակեալ ցամաք և համառօտ պատմութիւնէ կամ
ժամանակագրութիւնէ մի. և մեծանուն վահրամայ Բարունուոյ ուսմանուր վիպասանութիւնէն, որ
ճաշոց զբքի մը յիշատակարան մի գտեր ընդլայներ է. և որ որչափ զօվելի է այն արձակ յիշատա-
կարանի գրուածին և գրողին, այնքան կը բնավիտրացաննել վահրամայ մեծ անունը: Եւ որ աւելի
դիւրին էր, որով և աւելի ամօթապարտ, ոչ որ 'ի տերայցեաց տճով կամ նորհճով բան էր դրած
է այն աշխարհին արդի և 'ի նախնեաց մնացեալ վիճակին վրայօք, որոյ աւերակք հարիրաւոր
բերդից և վանորայից՝ իրենց աչաց առջև աւելի քան զաւելի կ'աւերականան, և անձայն խօսնակ
ցանկալի արձանագրութիւններն ալ իսպառ կը լռեն: